



Յոբելյանական համադրություն

ՆՈՒՐՈՒԱԾ

ԲԵՆԵՎՈՅԵՂԾ, ԳՐԵԳԷՏ, ԳԵՍՏԻՅՐԵԿ

**Մ. ԱՇԽԱԿՆԻ**

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱՁԵԴՆՈՒԹԵԱՄԸ

ՆԻԻ ԵՈՐՔԻ • ՆԻԻՃՐԳԻ • ՊՈՍԹԸՆԻ • ՏԻԹՐՈՅԹԻ

ՄՈՆԹՐԷԱԼԻ • ԹՈՐՈՆԹՈՅԻ

ՍԱՆ-ՖՐԱՆՍԻՍԿՈՒ • ԼՈՍ-ԱՆՃԷԼԵՍԻ

ԲԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐՈՒ

# Եզրույթ

Լիովին զգարով եւ գիտակցելով Մուշեղ Իշխանի գրական ու կրթական քառասնամեայ ժառանգին արժէքն ու տարույթիւնը, ու աւոր ընդհանուր հոգիին վայլատակումը, ճախրող երազներուն եւ կիզիչ կարօտներուն մտքմտքը, Միացեալ Նահանգներու եւ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ծրագրած է մեծարանքի եւ երախտագիտութեան իր տուրքը բնծայել մտքի այս անխոնջ մշակին ու հայաշունչ ազրումներու հարստացում երգիչին:

Կը հաւատանք որ մեր ժողովուրդը ամենուրեք կը բաժնէ մեր զգացումները անխախտ, եւ սրբէս յարգանքի եւ սիրոյ արտայայտութիւն կը բերէ իր մասնակցութիւնը Մուշեղ Իշխանի ի պատիւ սարքուած յրեւիճական հանդիսութեանց:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՄԻՈՒԹԻՒՆ



1975

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՕԵՐ

## ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ – ՃԵՆՏԵՐԵՃԵԱՆ



Ծնած է Սիվրիճիտար (Անգարա) 1913ին: Նախակրթութիւնը ստացած է Գամասկոսի ազգային վարժարանին մէջ: 1928–1930, մէկ ու կէս տարի հետեւած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան դասընթացներուն՝ աշակերտելով Օչականի, ապա սնցած է Պէյրութի ձեմարանը՝ որուն ընթացքը լրացուցած է 1935ին: Երեք տարի պաշտօնավարած է նոյն հաստատութեան մէջ՝ իրրեւուսուցիչ հայ լեզուի եւ հայոց պատմութեան:

1938ին մեկնած է Պրիւքսել, ու մինչեւ 1940՝ հետեւած է համարսարանի գրականութեան եւ մանկավարժութեան ճիւղերուն: Գերմանական արշաւանքի օրերուն՝ փախուսա սուած ու վերադարձած է Պէյրութ, ուր մինչեւ այսօր կը պաշտօնավարէ Հայ ձեմարանին մէջ, իրրեւ գասախօս եւ դեր-անօրէն:

Իր շարք մը հրատարակութիւններէն զատ՝ զանազան հանդէսներու եւ թերթերու մէջ ունի մեծ թիւով քերթուածներ զորս ստաջագրած է հրատարակել աւանձին հատորով:

# ԳԿԱՅՈՒՐՈՒՄՆԵՐ

(ԿԱՏՈՒԱԾԱՐ)

Մուշեղ Իշխանի գրականութեան մէջ մարդկային հոգիի ամենէն հարազատ եւ բիւրեղ սպրումները, տառապած բայց տառապանքէն չուսածուած հոգիի մը հայանուազ երգով առուել եւս կը մարդկայնացնեն եւ կը հայացնեն հոգիները անոնց որոնք կը հանդիպին այդ նուազին եւ կը ներդաշնակուին անով:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԻ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

...Ստեղծագործական շունչովն ու բերքովը իր ժողովուրդին իշխանական նախնայութիւն մը կատարած Մ. Իշխանի անունը կանխօրէի տատերով կը քանդակենք այսօր հայ մշակոյթի տաճարի սրբերուն, եւ՝ իր ժամանակի հոգեբանութեան վկայութիւնը բերող, հայ լեզուին նոր գեղեցկութիւն փոխանցող, հատարիմ ու անխտոր՝ Անմահ Բանի երկրպագու այս բանաստեղծ - գրողէտ - դաստիարակին առջեւ կը վառնաք մեր երաստապիտութեան կանթեղը:

Յ. ԳԵՂԱՐԳ

...կայծակի փայտափումներ չունեցաւ Մ. Իշխան, ո՛չ ալ մեխրացումներ: Զիկական կայծերու քանաստեղծը չեղաւ, այլ՝ բանաստեղծը չեղաւ, այլ՝ առատ լոյսի: Կան ուրիշներ որոնք բարձունքներ կը գրաւեն եւ անդունդներ կը գործին: Մ. Իշխան մնաց միշտ հաւատարմ կշիռ բանաստեղծ:

...Ու եթէ ըսենք թէ մեծարուողը բանաստեղծ մըն է, սպասարկուն Գեղեցիկին ու վսեմին եւ այն բոլոր ազնիւ բաներուն, որոնք անունդ կուտան մեր հոգիին, ճշդած կ'ըլլանք մակարդակը այն բարձրութեան, ուր մեր ժողովուրդին հասած ըլլաւ այլապէս ողջունելի է:

ԱԶԴԱԿ

...Մ. Իշխան բանաստեղծը իր մէջ ունի նկարագրէր նոր բայց խորունկ ու անխաթար գիծերով: Եւ տէրը այդ նկարագրին գիտէ յարգել զայն: Այլ-Սեփանիք մը ասիկա, որ հաւասարակշռուած իր ձեւով պիտի առանձնան բանաստեղծը մեր յարգանքին: ՎԱՀԷ ՎԱՀԵԱՆ

...իր գործերը աստիճանական վերելք մը եղան, իր հմայքը պարտադրող: Ան հաստատափայլ յառաջացաւ, լայնցրնելով իր հորիզոնը:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

...Մ. Իշխանի բանաստեղծական խառնուածքին գլխաւոր յատկութիւններն են՝ գգայնութիւն եւ արտայայտութեան գուրայ եղանակը, որ կը խորշի անտեղի պտորկումներէ եւ կը նախընտրէ երազին նորը երանգները, քախիծին դաշնալուր եւ յուզայարոյց մեղեդիին՝ շեփոյններուն աղմուկէն: Ան կը հանգիստանայ հայ գրականութեան Սիւլի-Փրիտոմը:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԵՈՒՏԵԱՆ

...Երէ համեստ չըլլար ի ձեռք, այսօր արուեստական շառաչ ու աղմուկ պիտի ըլլար իր անուան շուրջ: ասկայն լոյսի մարդն էր Մ. Իշխան եւ ոչ հայի: Երբ բանաստեղծը լոյսը կը մտնայ՝ կը դադրի ըլլալէ բան ստեղծող, կը դառնայ խօսքի բանուոր, պատ շարող, եւ չ'ըլլար արուեստագէտ: Մ. Իշխան շարունակեց համբան, երագելով կեանքը, Կեանքը վերածելով երազի, ու միշտ մինակ մնաց, բոլոր իրար բանաստեղծներուն պէս:

Բ. ՓԱՓԱՉԵԱՆ

... Իր ժողովուրդի-մայր զգայնություններին առաջ Մ. Իշխան իր սնունդը, հողի, սու- նի, օճախի, սիրոյ բարութեան, սեղծութի, կառուցման ու վերացման եռուն բնագոյններէն ու նոր թրթիւնէր, գոյնէր, արին ու խորհուրդ հաղորդելով անոնց՝ վերադարձուց նոյն ժողովուրդին, որ ահաւատիկ սիրով, խանդով, հողեկան համբողջանուր կշռոյթով մը կու- գայ յայտնելու իր երախտապիտանութիւնը իրեն, իր երգիչին, խղճմանքի իր ձայնին:

## Բարոյն

Ձինք այցելող մեծ կամ պարզիկ որեւէ ներշնչում ան չի վատասիր շու- տով ճերմակ բույրի կանչին. նախ քան ներշնչումը բարի. պատկե- հեա ներքին կրոյցի մը նախը, խորին բնաորութիւնն է Մ. Իշխանին անոր քակտելի կապ մը հաստատելը:

... Մ. Իշխան համամարդ- կային հասուն նկարագիրն է ան այլեւ, «Մեր- գանտի ինքիւն», «Պարտիզանք» եւ շարք մը խորհրդապաշտ բերթուածներով խմայական ու յարմար բարձրացող խաղող հողի, որ նի- թական գանձ շունենալով իր սիրտը մաս առ մաս բաժնեց հայ ժողովուրդին ու համայն մարդկութեան, բլուրով «բարիք կամեցողն ու իրազործողը»:

ԳՐ. ԾԱԿԻՆԵԱՆ

... Մուշեղ Իշխան ամէնէն օտակալ քերթողներէն է յետ եղեռնի սերունդին: Անմիջականօրէն հաղորդական, ջերմ ու սրտային տաղեր են իր բանաստեղծութիւն- ները, որոնք սան կարօտի, սիրոյ, հայրենասիրական եւ ոգեկոչական խորունկ ապ- բումներու բիրեղներ են: Լեզուական հազուադիւս ջնորհներով, որոնց մէջ յուզական տարրը գերակշիռ կը մնայ միշտ, Մուշեղ Իշխան կ'իշխէ սրտերուն, ու հոգիներուն կ'անցնի՝ համայնական մնալու հիմնական արժանիքով: Մ. ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

... Արեւմտահայ աւանդական բանաս- տեղծութեան (վարուժան - Թէքե- կան) ժառանգորդն է Մ. Իշխան, որ պարզու- թեամբ ճոխացուց հայ բանաստեղծութիւնը, իսկ հայ լեզուն իր գրչին ներքեւ ստացաւ բիրեղեայ պատկեր, որոնցմով արարեց փերթուածներ «վը- ֆիտ եւ հեգաստի, իր պարզութեան մէջ վսեմ, ներդաշնակ, հարուստ, նշգրիտ, համապատաս- խան փերթուածներու ներքին կշռոյթին»:

ԿԱՐՕ ՓՈԼՍԵԱՆ

... Մ. Իշխանի «Տուներու երգը»: Հայրենական օճախի, մթնոլորտի, խուն տողերուն հետ հասայ «Նոր շինուող տուն»ին առջև ու հոն կանգ առի: «Այնտեղից ինչ մը մէջ կառուցման տուն մը կը նկարագրուէր հոն, իր հիմքին, շաղախին, քրմե- ժայթք մը փարցած՝ յաւերժութեան սլացող մարդուն անյագ կարօտէն»: Առանձին գեղեց- կութեան մը հանդիպած մարդու անհանգստացնող ուրախութիւն մը զգացի մէկէն: Չկրցայ սուեռած՝ գոց արտասանեցի վերջին երկուքը:

—Մեր առհաւական ապրումները այս պարզութեամբ ու յուզումով բռնած եթէ հինգ քերթուած բերեա ինձի, վաղը ես այս տղան իրաւ բանաստեղծ կը հռչակեմ... Պ. Ս.

... Մ. Իշխանի համար, աշխարհացրիւ հայութեան ներկան ու ապագան սերտօրէն կապուած կը մնան մտաւորականին, դաստիարակին ու գրագէտին, որոնք ճակատագրական դեր ունին կատարելիք այդ ուղղութեամբ: Մ. Իշխանի այս գեանի վրայ կատարած միջամտութիւնները -- յօղումներով, խմբագրա- կաններով ու բեմով ո՛չ միայն բովանդակութեամբ, այլեւ գեղագիտական տարակներով, գեղեցիկ նմոյշներ են խորպագսութեան ու պայծառատեսու- թեան: Մանաւանդ՝ ճառագայթող պարզութեամբ ոճը եւ իշխանական շքեղու- թեամբ լեզուն:

Ա. ՆՈՒՐԵԱՆ



# ԿՈՒՆ ԽԻՔՅՈՐ ՈՒՆ ԳՈՎԻՆ

Մա՛յր իմ՝ արեւ ու հեռանո՛ւշ լուսնկայ,  
Դարձար նշխար ու միացար մեր հողին  
եւ հողն անուշ հայրենիքին հնամեայ  
Քիչ մ'աւելի անուշցաւ...

Մա՛յր իմ՝ երկինք եւ առաւօտ սրբալոյս,  
Դուն մեր հողին տուիր հողիդ խնկարոյք  
եւ հողը սուրբ լուսապսակ պտայերուս  
Քիչ մ'աւելի սրբացաւ...

Մա՛յր իմ, դուն գանձ եւ անսպառ ոսկեհամք,  
Դարձար խորհուրդ եւ հողակոյտ աննշան,  
Բայց գանձն անխոյզ մեր հողերու լանջքին տակ  
Քիչ մ'աւելի անեցաւ...

Մա՛յր իմ՝ ազբիր սիրոյ անհաս հրաշքին,  
Գացիր ննջել Լուսաւորչի աստղին տակ  
եւ սիրտն անհուն Հայաստանի մայր հողին  
Քիչ մ'աւելի մայրացաւ...

Մա՛յր իմ՝ երդիկ, մա՛յր իմ՝ սեղան տոհմական,  
Հարազատ բառ եւ սուրբ բարբառ մայրենի,  
Քեզմով հիմա աշխարհն հայոց աննման  
Քիչ մ'աւելի հայացաւ...

Մ. ԻՇԽԱՆ

# ԵՐԿ ԾՔԵՐՈՒԹԻ

Միշտ դէպի վե՛ր, դէպի բարձունքն երազին,  
Գաղափարի ո՛վ վարսագեղ նծոյզներ.  
Մինչեւ եթե՛ր, մինչեւ աստղերն ու լուսին՝  
Տարե՛ք դուք գիւս անք երբին հետ անվեհեր:

Կարօտներուս քեւերուն մէջ հրեղէն  
ես կը սանձեմ ահա անք բափն աննուան,  
Որ ամբոխի հիացումին ընդմէջէն  
Անցնիմք այսօր իբրեւ նուագ ու նանանչ:


Կ'այելոծի շուշանաբոյր կարծիքս տակ  
Սէրն անհամար հողիներու պարմանի,  
Սէրը լոյսի, գեղեցկութեան անպարփակ  
եւ մեր կերտած յաղթանակին պանծալի:

Ի՛նչ փոյթ թէ անք ուտերուն շուրջ բաւալի  
Արինազանգ տիզմը կեանքին դաւաղիր.  
Յարդգողն ինչպէս՝ Յաւերժութեան կ'երկարի  
Գաղափարի մեր այս նամբան լուսածիր:

Մերն է ներկան, մերն է գալիքը շքեղ,  
Անցեալն ամբողջ՝ մեզ ընծայուած գանձարան.  
Մեր հաւատքի ջահերն են վառ ամեն տեղ  
եւ կամքը մեր՝ մէյ մէկ կոբոզ տիրական:

Այս երբն ըլլա՛յ քոզ ցնձատոսն ու հանդէս  
Յարութեան մէջ նաւասարդեան օրերուն  
եւ այս գարուն հասակներուն յոյսին պէս  
Մեր դրօշներն ըլլան փառեով փո-զիզողուն:

Մ. ԻՇԽԱՆ



# ՂԱՅԱՏԱՆ


(ԻՍՏԱՆԻՆԻ)

Հայաստան,  
 Լեռներու պար, լեռնաշխարհ,  
 Երկիրդ ամբողջ՝ լեռ մը միայն — Արարա՛տ,  
 վերասլաց եւ բրգանիստ գազափար,  
 Հայրենադէմ աստուածուրեան լոյս նակատ,  
 Որ կը կայէ երկինքի ջինջ կապոյտին  
 Հայութեան աչքն ու հոգին  
 Իր սուրբ լեռան կրանիքին պէս անմաշ,  
 Աստուածախօս պատգամէն վերջ ու առաջ,  
 Հանգրուանէ հանգրուան,  
 Լեռը հիմէն կրցաւ ընել տեղաշարժ...

Հայաստան,  
 Անբերելոյ յանախանք,  
 Հիմա դարձեր ես արդէն  
 Կեանքի կռույթ, արեւածայլ հսկայ գանգ  
 Եւ կը հնչես տիեզերքի գմբէքէն:  
 Միջոցն ամբողջ գերշազեցած է քեզմով  
 Եւ ժամանակը բոլոր  
 Քեզ կը տանի, քեզ կը բաշխէ ամենուն:  
 Հիմա ի լուր մարդկութեան,  
 Ի լուր ցայգին, արեգակին, աստղերուն  
 «Խօսում է Երեւանը...»

Հայաստան,  
 Սրբազան ուխտ, արինոտ գիր ու կտակ,  
 Անվերջ խոստում, բազում նառ,  
 Անգին առանց մեռելներու նահատակ,  
 Լուսամարմին Գաղափար  
 Եւ պանդուխտի մեր սրտերէն շող առ շող  
 Դէպի Մասիս երկարող  
 Վերադարձի երազագեղ հանապարհ...  
 Հայաստան,  
 Նոր օրերու մեքենագէտ արշախն  
 Քաջամարտիկ ու դեռք,  
 Երկտրաշարժ կեանքի հզօր վերելքին,  
 Հարսաբապետ ու բանուոր,  
 Գեղակերտ շէն ու ոտան,  
 Սանդարաբ բազուկներու բեղուն ճիգ,  
 Մարքի նուազ, բահի գրոհ յարթական,  
 Հանքերու գանձ, ջրանցքի ցանց յարահուն  
 Ու ծխաշունչ գործատուն,  
 Ներշնչումի անհունորէն խոր երկինք,  
 Լոյսի բանդակ ու մասեան  
 Եւ իր հողին նուանումով երջանիկ  
 Սերունդի վառ ապագան...

1945, ՊԷՐՍԻՔ  
 Մ. ԻՇԽԱՆ





Մ. ԻՃԻՆԻ

Մ. ԻՃԻՆԻ ԵՐԿԵՐԸ